



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 08 ԱՊՐԻԼ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնս վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՍ 143

ՈՂԲ ԵՒ ԶՂՋՈՒՄ

**Տ**էր, լսէ՛ իմ աղօթքս,  
դուն՝ որ հաւատարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս,  
դուն՝ որ արդար ես՝ պատասխան տուր ինձի:  
Ես բու ծառայ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկեր,  
որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ բու դիմացդ արդարանայ:  
Թշնամի՛ն զիս հալածեց, կեանքս հողի՛ն հաւասարցուց,  
եւ զիս խաւար աշխարհի՛ն բնակիչ դարձուց,  
արդէն մեռած մարդոց պէս:  
Ամէն առաւօտ ինձի սէրդ լսել տուր,  
որովհետեւ ես քեզի՛ վստահեմ եմ:  
Ահա քեզի կը դիմեմ, ցոյց տուր՝ ինչ ձեռով կ'ուզես որ ապրիմ:  
Քու կամքդ կատարել սորվեցուր ինձի,  
որովհետեւ իմ Աստուածս ես դուն.  
բու բարի Հոգիդ զիս ուղիղ ցամբով թող առաջնորդէ:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈԹՔ

**Խ**ոնարհ հոգիով, փշրուած սրտով,  
քեզի կը դիմենք ո՛վ Հայր երկնաւոր,  
այնպէս մը ըրէ, որ մեր ընծաները ըլլան Աբելի ընծայի նման ընդունելի:  
Տուր մեզի շնորհքը, որպէսզի կարենանք խոստովանիլ մեր մեղքերը,  
եւ չըլլանք Կայէնի նման յուսահատ, այլ՝ ապաւինիմք քեզի,  
որովհետեւ ողորմած, բաղք, անյիշաչար եւ ներողամիտ ես արարածներուդ հանդէպ:  
Եւ մենք միշտ կը փառաւորենք Ամենասուրբ Երրորդութիւնը  
Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ

ԾՆՆԴՈՑ 4:1-15



(Ծն 4. 1-2).- **«Եւ Ադամ գիպցաւ իր Եւա կինը ու ան յղացաւ ու Կայէնը ծնաւ եւ ըսաւ. "մարդ սրացայ փրորջմէն": Եւ դարձեալ անոր Աբել եղբայրը ծնաւ եւ Աբել ոչխարներու հովիւ եղաւ, բայց Կայէնը երկիրը կը մշակէր»:**

Ինչպէս բուսականութեան եւ կենդանիներու սրեղծագործութեան պարագային, Աստուած իրաքանչիւրին փուրաւ ինքզինքը բազմացնելու կարելիութիւնը, մարդուն եւս փուրաւ աճելու եւ բազմանալու հրահանգը:

Ըստ Աստուածաշունչի, «Գիպնալ» կը նշանակէ զուգարորում: Աստուծոյ հրահանգով եւ կամքով է, որ մարդկութիւնը կ'աճի: Թէեւ զուակը ծնողներու ծնունդն է, բայց նաեւ Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է իրաքանչիւր արարածի ծնունդը: Իրաքանչիւր մարդու այս աշխարհ գալը չի կրնար պատահական ըլլալ, այլ՝ Աստուծոյ կամքին շարունակական արտայայտութիւնն է:

(Ծն 4.3-5). **«Ժամանակ մը յետոյ Կայէն երկրի պրուդէն Տիրոջը ընծայ բերաւ: Եւ Աբել ինք ալ ոչխարներուն անդրանիկներէն ու անոնց պարարտներէն բերաւ: Տէրը Աբելի ու անոր ընծային նայեցաւ, բայց Կայէնին ու անոր ընծային չնայեցաւ: Ուստի Կայէն խիստ բարկացաւ ու երեսը կախեց»:**

Աստուծոյ առջեւ իրաքանչիւրին սրտին մէջ եղածն է, որ կ'արժեառէ եւ ընդունելի կամ անընդունելի կը դարձնէ ընծան:

(Եբր 11. 4).- *«Իր հաւատքով է որ Աբել Կայէնէն շնոր ատելի լաւ գոհ մատուցեց Աստուծոյ, եւ այդ հաւատքին համար ալ Աստուած վկայեց իր արդար ըլլալուն մասին, ընդունելով իր մատուցած նուէրները: Եւ թէպէտ Աբել մեռաւ, բայց իր հաւատքին օրինակը խօսուի կը մնայ միշտ»:*

Աբելի նուէրը կը գնահատուի որպէս հաւատքի եւ արդարութեան արտայայտութիւն: (Ա.Յհ 3. 9-12).- *«Ով որ Աստուծոյ զուակ դարձած է՝ մեղք չի գործեր, որովհետեւ Աստուծոյ կեանքին հաղորդակից կը մնայ: Այլեւս կը դադարի մեղանչելէ, քանի Աստուծոյ զուակ կը դառնայ: Ահա այսպէս կը զանազանուին Աստուծոյ որդիներն ու Սաբանային որդիները.- Ով որ արդարութիւն չի գործեր՝ Աստուծոյ որդի չէ. ով որ իր եղբայրը չի սիրեր՝ նոյնպէս Աստուծոյ որդի չէ: Պատուիրանը, որ սկիզբէն իսկ լսեցինք, սա է՝ որ սիրենք իրար: Հետեւաբար ջրլսանք Կայէնի պէս, որ Չարին օրինակին հետեւելով՝ իր եղբայրը սպաննեց: Եւ ինչո՞ւ սպաննեց. որովհետեւ իր գործերը չար էին, մինչ եղբօր գործերը՝ բարի»:*

Կայէնը ոչ միայն իր եղբայրը չէր սիրեր, այլ՝ իր գործերն ալ չար էին: Աստուած անոր նուէրը մերժեց, ոչ թէ անոր համար որ նուէրը չսիրեց, այլ՝ Աստուած մարդոց գործերուն համեմատ արժեառեց անոնց նուէրները. եւ այդ գործերը ցոյց փոխին որ Աբելին նուէրն է ընդունելին եւ ոչ Կայէնինը:

(Ծն 4.7). **«Եթէ աղէկ ընես ընդունելի չ'ըլլա՞ր: Եթէ աղէկ չընես, մեղքը դրանը քով պառկած է եւ անհկաքեզի պիտի հնազանդի ու դուն անոր պիտի իշխես»:**

Աստուած կ'ուզէ սորվեցնել, որ եթէ նոյնիսկ մարդուն վարմունքը ներկայիս շիջակ չէ, բայց ան կրնայ իր վարմունքը ուղղել դէպի դրականը, նոյն աստիճանով միշտ պատրաստ է ընդունելու զայն:

Ինչ կը նշանակէ լաւը եւ բարին չգործել:

Բարին չգործելը սկիզբն է չարիք գործելուն: Ճիշդ է որ բարիք չգործելը փակաւիճ կրատրական վիճակ մըն է եւ ցոյց կու տայ որ մարդը բան մը չ'ընէր՝ որ փակաւիճ գէշ բան մը չէ, բայց կրնայ անմիջապէս պատճառ դառնալ չարիքի. ինչպէս Քրիստոս կ'ըսէ. *«Տուն մը ուրկէ դու մը կ'ելլէ եւ կերթայ անապատ, կը շրջի եւ եթէ հոն հանգիստ չգտնէ, այս անգամ իր հետ կ'առնէ եօթը ուրիշ դուեր եւս եւ կը վերադառնայ նոյն փունը»:* Դատարկ մնացած փեղ մը, սիրտ մը, միտք մը՝ միշտ չարիքով կը լեցուի: Եթէ մարդը բարիք չգործէ, շուրջով կ'իյնայ մեղքի մէջ. քանի որ օձը միշտ պատրաստ է մարդու զարշապարը խայթելու, եւ մարդը անորոշութեան մէջ շար դիւրաւ կ'իյնայ չարին լարած թակարդին մէջ:

Աստուած նոյնինքն մեղքին մէջ իյնալու աստիճան ցոյց կու տայ փրկութեան ելքը, եւ մարդուն կարելիութիւն փուրած է մեղքին յաղթելու՝ եթէ ուզէ, իր միտքը լարէ եւ վճռական ըլլայ: Աստուած Կայէնին յիշեցնել կու տայ, անոր գորացնելու համար, որպէսզի ան չընկճուի եւ գործած սխալին հակառակ, փորձէ դարմանել զայն. սակայն, Կայէնը կ'ենթարկուի իր սրտին եւ մտքին մէջ խորացած մեղքին եւ չար մտածողութեան, եւ փոխանակ եղբօրը հետ լաւ ըլլալու կը սպաննէ զայն, եւ այդ առիթով Աստուծոյ ձայնը անմիջապէս կը հնչէ անոր ականջին ըսելով. **«Կայէն, ո՞ր է քու եղբայրը: Անհկա ըսաւ. "Չեմ գիպեր, միթէ ես իմ եղբօրս պահապանն եմ"»** (Ծն 4.9):

Աստուծոյ «ո՞ր է եղբայրդ» հարցումին իբրեւ պատասխան, Կայէնին խօսքին մէջ կը խտրացնէ գրեթէ բոլոր մարդկութեան կեցուածքը իրենց եղբայրներուն եւ ուրիշ մարդոց հանդէպ՝ փեսակ մը անպատասխանափուր կեցուածք:

Աստուած, երբ կը հարցնէ՝ գիպէ եղելութիւնը, եւ երբ գիպնալով կը հարցնէ, կը նշանակէ նպատակ եւ դիպում մը ունի իր հարցումը:

Աստուած իր հարցումով կ'ուզէ մղել Կայէնը որ անդրադառնայ իր արարքին եւ իր ըրած հաստատումը թէ «եղբօրդ արինը երկրէն ինձ կը բողոքէ», Աստուած գիպէ ամէն ինչ որ մարդ ծածուկ կը կարծէ:

Եթե երբեք Աստուած մեզ ամբողջ աշխարհի վրայ տեր եւ իշխան կարգեց, այդ իշխանութիւնը միայն ծառին կամ քարին վրայ չէ որ կ'արտայայտուի, այլ առաջին հերթին կը յայտնուի մեր սեփական ընտանիքին հանդէպ, եւ յետոյ շրջանակը ընդարձակելով մեզ շրջապատող ուրիշներու՝ Աստուծոյ ժողովուրդին հանդէպ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Ընտրէ՛ք մարդիկ որոնք նախ իրենց սեփական փան մէջ ցուցաբերած ըլլան մեծ դաստիարակի պարտականութիւնը*»: Մէկը որ չի կրնար իր սեփական ընտանիքի տերը կանգնիլ ինչպէս պիտի կարենայ իր Տիրոջ հօրին տերը կանգնիլ. ինչպէս Քրիստոս կ'ըսէ. «*Ով որ փոքր բանի մէջ հաւատարիմ է մեծի մէջ ալ հաւատարիմ կ'ըլլայ*»:

(Ծն 4.10). Տէրը ըսաւ. «**Ի՞նչ ըրիր, քու եղբորդ արեան ձայնը գեպնէն ինձի կը բողոքէ**», հմմտ (Եբր 11. 4):

Աբելը սպաննուեցաւ, սակայն, աշխարհին համար կորսուած իր կեանքը բողոք մը ունի:

Աստուած «Ծննդոց» գիրքին առաջին էջերէն սկսեալ, ոչ միայն կ'ըսէ որ փրկութեան ծրագիր մը ունի, այլ նաեւ կը յիշեցնէ Աստուծոյ դատաստանը եւ դատապարտութիւնը:

Երբ որ ժամանակը գայ Աբելը արդարութիւն պիտի պահանջէ Աստուծմէ՝ իրեն հանդէպ կատարուած իրաւագրկութեան համար, եւ Աստուած պիտի դատապարտէ, հմմտ (Յյա 6. 9,10):

Նոր Կրակարանի մէջ կայ ուրիշ արիւն մը որ տարբեր կը խօսի. Աբելի արիւնը արդարութիւն կը պահանջէ՝ վրէժխնդրութեամբ, իսկ Քրիստոսի արիւնը դարձեալ արդարութիւն կը պահանջէ, սակայն ներողամտութեամբ: Ներումը կը փրուէ, սակայն, անոնց՝ որոնք ներումի համար փրուած ժամանակին կամ պատեհութեան մէջ այդ ներումէն կ'օգտագործեն եւ իրենց ընթացքը կ'ուղղեն. եթէ մարդ ծանր յանցանք գործեց բայց արդարօրէն գղջաց, կը նշանակէ որ Աստուծոյ դատաստանին մէջ իրեն համար պատիժ չկայ, այլ Աստուած այդ յանցանքը ներողամտութեամբ պիտի դիպէ, որովհետեւ մեղանշողը պէտք եղած ապաշխարութիւնը, գոջումը եւ դարձը կատարած է, եւ ինքզինքը այդ վիճակէն դուրս բերելու գիտակցութեամբ՝ որդեգրած կ'ըլլայ տարբեր բան մը՝ Աստուծոյ սէրը եւ գթութիւնը: Վրէժխնդրութիւնը միշտ կը մնայ անոնց համար որոնք առանց գղջալու կը մնան իրենց յանցանքներուն եւ անիրաւութեանց մէջ: Ներողամտութիւնը, սակայն, Աստուած կը շնորհէ - Քրիստոսի բերած շնորհքն է- բոլոր անոնց որոնք յուսահատութեան մէջ ըլլալով հանդերձ իրենք զիրենք դուրս կը բերեն այդ վիճակէն:

Հակառակ մարդուն սպաննող վիճակին, Աստուծոյ գթասրտութիւնը մարդուն նկատմամբ:

Կայենի թափառական ըլլալը չպիտի հասկնանք բառացի կերպով. ան հոգեպէս մարդոցմէ փախստական էր, որովհետեւ կը վախնար որ իր եղբոր արեան գինը պահանջուէր իրմէ:

Փաստօրէն Կայենի մէջ կայ սպաննուելու վախը, եւ հակառակ Աստուծոյ փրուած վստահութեան, ինք դարձեալ նոյն վիճակի մէջ պիտի մնայ.

(Ծն 4.15). Տէրը ըսաւ անոր. «**Ուրեմն ով որ Կայենը սպաննէ, անկէ եօթնապարիկ վրէժ առնուի**»: Աստուած Կայենի վրայ նշան մը դրաւ: Հաւանաբար ֆիզիքական նշանի մը մասին չէ խօսքը, այլ՝ տեսակ մը ապահովութիւն:

Կայեն գիտակից էր իր գործած մեղքին եւ ըսաւ. «*իմ մեղքս թողութիւն գտնելու չափէն աւելի մեծ է*»: Այս խօսքերը կ'արտայայտեն Կայենի պէս սրբաճող մարդոց յուսահատութիւնը. ան Աստուծմէ թողութիւն գտնելու յոյսը չունէր: Եւ սակայն, առաքեալը կ'ըսէ. «*մեր յանցանքները ինչքան ալ մեծ ըլլան՝ Աստուծոյ գթութենէն մեծ չեն*»:

## ԱՊՕԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց,  
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*